ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



Լիդիան Արմենիա Ընկերության աջակցությամբ ԳՈՒՄ ՀԿ-ն, Հյուման Դիզնիթի ընդ Փիս Բարեգործական հիմնադրամի/HDP և Զանգակատուն ՀԿ–ի համագործացությամբ 2017թ. մարտից ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ, Գնդեվազ, Սարավան և Սյունիքի մարզի Գորայք համայնքներում իրականացնում է “Սոցիալական ձեռնարկատիրության զարգացում” ծրագիրը:

- **Գործընկերները**

HDP Հիմնադրամը վերջին մի քանի տարում Ընկերության աջակցությամբ իրականացրել է “Բարեկեցիկ կյանք՝ նոր տեխնոլոգիաների միջոցով” Ծրագիրը Գորայք, Սարավան և Գնդեվազ համայնքներում: Ծրագրի արդյունքում հիմնվել են ավելի քան 33 ջերմոցներ և նույնքան բարձր բերքատվության բաց դաշտ՝ որպես նոր գիտելիքներ, հմտություններ և եկամուտ ստանալու միջոց: Ծրագրից օգտվել են առնվազն 100 ընտանիք, կամ 420 մարդ:

Զանգակատուն ՀԿ-ն նույնպես, Ընկերության հետ համագործակցության արդյունքում հիմնել է շահառուների ***մոտ 50 մասնակիցներով*** խմբեր Ջերմուկ և Կեչուտ համայնքներում, որտեղ իրականացվել է “Աղբից՝ արվեստ և եկամուտ” բնապահպանական իրազեկման, հմտությունների ուսուցման նախաձեռնությունը, որի միջոցով մասնակիցները կարող են ստեղծել եկամուտ, փոխանցել իրենց ձեռքարվեսի հմտություններն ուրիշներին:

Սա յուրօրինակ ծրագիր է, որի ընթացքում աղբի տարբեր տեսակներից՝ անձեռոցիկներ, պլաստիկ շշեր և տոպրակներ, պատրաստում են կիրառական արվեստի գործեր, ցուցադրում և վաճառում տարբեր ցուցահանդեսներում, ստանում եկամուտ:

- **Ծրագրի նպատակը**

նպաստել սոցիալական ձեռնարկատիրության զարգացմանը՝ որպես համայնքի բնակիչների և սոցիալապես խոցելի խմբերի բարեկեցության միջոց:

- **Շահառուները**

- Ջերմուկ, Գնդեվազ, Սարավան և Գորայք համայնքների ֆերմերներ
- ջերմոցների և բաց դաշտերի սեփականատերեր
- գյուղատնտեսական մթերք արտադրողներ
- ձեռագործ աշխատանքների սաներ:

Ծրագրի առաջին փուլում 26 շահառու մասնակցել են ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից իրականացված ՍՁ հիմնադրմանն ուղղված կարողությունների զարգացման դասընթացներին և խորհրդատվություններին հետևյալ թեմաներով՝

- **«Կառավարում և առաջնորդություն»,**
- **«Սոցիալական ձեռնարկատիրություն»,**
- **«Բիզնես մոդել», «ՍՁ-ի իրավական և հարկային դաշտերի հիմնում»,**
- **«ՍՁ-ի կառավարման կառուցվածքի և կանոնակարգի մշակում»**

Ծրագրի երկրորդ փուլում շահառուների համար կկազմակերպվեն նաև հետևյալ կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացներ և խորհրդատվություններ՝

- **Շուկայի ուսումնասիրություններ**
- **ՍՁ-ների ապրանքանիշի մշակում**
- **Մարկետինգային ռազմավարության և բիզնես պլանի զարգացում**
- **Ապրանքների փաթեթավորում և վաճառք:**

ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԵԼ ԵՆ՝

- *«Առատ զամբյուղ» սպառողական կոոպերատիվը Գնդեվազում*
- *«Ապագայի շողեր» կրթական, սոցիալական հասարակական կազմակերպությունը Ջերմուկ և Կեչուտ համայնքներում*

«ԱՌԱՏ ԶԱՄԲՅՈՒՂ» ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՀԻՄՆՈՒՄ

Գյուղմթերքի հավաքման կետ սոցիալական ձեռնարկության ստեղծման նպատակով իրականացվել են 12 թեմայով դասընթացներ և խորհրդատվություններ և փորձի փոխանակման այց Լուկաշին սպառողական կոոպերատիվ՝ 10 մասնակիցներով:

Ընդհանուր ժողովի արդյունքում, որը տեղի է ունեցել **հուլիսի 17-ին**, որոշվել է գրանցել սոցիալական ձեռնարկություն՝ «Առատ զամբյուղ» սպառողական կոոպերատիվը: Ընդհանուր ժողովին մասնակցել են շահառու 3 համայնքից ***34 բնակիչներ***, որոնցից՝

- ***22-ը դարձել*** են կոոպերատիվի հիմնադիր անդամներ,
- կազմվել է **9 հոգանոց վարչություն**,
- ***3 հոգանոց վերստուգիչ*** հանձնաժողով
- ընտրվել է **ՍԶ-ի նախագահը Գնդեվազից**:

Ներկայումս կանոնադրությունը ներկայացվել է իրավական հաստատման: Ծրագրի շրջանակներում հավաքման կետի շնորհիվ իրացվել է ջերմոցատերերի արտադրած 675 կգ վարունգ, որը վաճառվել է Երևանի տարբեր մարկետներում, ինչպես նաև Լիդիանի կապալառուներին: Առաջիկայում պլանավորվում է հավաքման կետի գործարկումը, որը ներառում է 5 տոննա սառցարան: Ծրագրի երկրորդ փուլում կիրականացվի մարկետինգային գործընթացների կազմակերպում ու արտադրանքի սպառում::

Առաջիկայում պլանավորվում է ***գյուղմթերքի հավաքման կետի գործարկումը***, ինչը կնպաստի գյուղմթերքի մթերման և իրացման խթանմանը:

Հավաքման կետի մարտահրավերը ծրագրի երկրորդ փուլում ***մարկետինգային գործընթացների կազմակերպումն ու արտադրանքի սպառումն է:***

«ԱՊԱԳԱՅԻ ՇՈՂԵՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄ

«Ձեռքի աշխատանքներ» սոցիալական ձեռնարկության ստեղծմանն ուղղված կազմակերպվել են կարողությունների զարգացման 12 թեմայով դասընթացներ և խորհրդատվություններ:

Հուլիսի 15-ին տեղի է ունեցել ընդհանուր ժողով՝ հիմնադիրների/**թվով 22 հոգի/,** համայնքի բնակիչների և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, որի արդյունքում որոշվել է գրանցել կրթական, սոցիալական հասարակական կազմակերպություն՝ **«Ապագայի շողեր»** անվանմամբ:

Ընդհանուր ժողովի ընթացքում ձևավորվել է՝

- **10 հոգանոց խորհուրդ**
- **2 հոգանոց վերստուգիչ հանձնաժողով**
- **ընտրվել է ՀԿ-ի նախագահը**:

Ներկայումս կանոնադրությունը ներկայացվել է Արդարադատություն նախարարություն՝ հաստատման նպատակով:

«Զանգակատուն» ՀԿ-ի աջակցությամբ մշակվել են 10-ից ավելի ապրանքատեսակներ, որոնց վաճառքի համար ներկայումս մշակվում է մարկետինգային ռազմավարություն:

Օգոստոսի 20-ին Ջերմուկի հայտնի Գալերեայում կայացավ «Ապագայի շողեր» ՀԿ-ի «Ջերմուկ հանդիքրաֆթ» սոցիալական ձեռնարկության՝ տեղի կանանց և դպրոցահասակ աղջիկների կողմից պատրաստված ձեռագործ իրերի, ցուցահանդես-վաճառքը:

Ցուցահանդես-վաճառքից ստացված ընդհանուր հասույթը կազմում է 136.000 ՀՀ դրամ, որի 20%-ն ուղղվելու է Ջերմուկի 10 անապահով ընտանիքների երեխաներին դպրոցական պարագաներ տրամադրելուն:

Սոցիալական այս նախախձեռնության շնորհիվ վաճառվեցին երեխաների և Ջերմուկի կանանց ձեռագործ իրեր և հուշանվերներ, որոնցից յուրաքանչյուրն այսուհետ համայնքի կենսամակարդակի բարելավման գործի փոքրիկ մասը կկազմի:

ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՇԱՐՔԻՑ....

Շահառուները կիսվում են կարողությունների զարգացման դասընթացներ, խորհրդատվությունների վերաբերյալ իրենց տպավորություններով:

Պատմում են «Առատ զամբյուղ» հավաքման կետի շահառուները.....

***

«Ես շատ շնորհակալ եմ Լիդիան Հայաստանին, որ ԳՈՒՄ ՀԿ-ին հնարավորություն տվեց մեզ կրթելու, խորհուրդ տալու և՛ տեսականորեն, և՛ գործնականում կոոպերատիվի գործունեությունը պատկերացնելու համար: Մենք մասնակցել ենք տարբեր թեմաներով դասընթացների, խորհրդատվությունների և դրանց շնորհիվ հիմա կարող եմ ասել, որ մենք ունենալու ենք գրագետ կազմակերպված կոոպերատիվ»:

Սամվել Թորոսյան, Գնդեվազ, HDP բարեգործական հիմնադրամի շահառու, «Առատ Զամբյուղ» սպառողական կոոպերատիվի նախագահ

***

«Չեմ ուզում պարծենալ, բայց համոզմունք ունեմ, որ ԳՈՒՄ ՀԿ-ի տված գիտելիքների և իմ ունակությունների շնորհիվ կարող եմ արժանի արդյունք ցույց տալ հենց իմ աշխատանքում: Մինչ դասընթացներին մասնակցելը, ես շատ տեղեկություններ չունեի կոոպերատիվի մասին, բայց դասընթացներից, խորհրդատվություններից և փորձի փոխանակման այցելությունից հետո բավականին շատ ինֆորմացիա ստացա կոոպերատիվի գործունեության մասին և հիմա հստակ պատկերացնում եմ մեր ապագա գործունեության ընթացքը»:

Զարինե Գևորգյան, Սարավան, HDP բարեգործական հիմնադրամի շահառու, «Առատ Զամբյուղ» սպառողական կոոպերատիվի վարչության անդամ

***

«Ես նախկինում բազմաթիվ դաընթացների եմ մասնակցել, բայց ոչ մի անգամ դրանք այսքան հաճելի, ուրախ և ուսումնառատ չեն եղել: Ես շատ շնորհակալ եմ Լիդիան Հայաստանին ԳՈՒՄ ՀԿ-ի միջոցով մեզ օգնելու, կրթելու համար: Հուսանք, որ բացի այս ծրագրից, էլի հնարավորություն կունենանք մասնակցելու ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից կազմակերպված դասընթացներին»:

Քրիստինե Հարությունյան, Գորայք, HDP բարեգործական հիմնադրամի շահառու, «Առատ Զամբյուղ» սպառողական կոոպերատիվի վարչության անդամ

***

«Լիդիան Արմենիայի ֆինանսական աջակցությամբ ԳՈՒՄ ՀԿ-ի կազմակերպած դասընթացներն ինձ համար շատ հետաքրքիր են. շատ դրական լիցքեր և գիտելիքներ եմ ստանում: Դասընթացի անցկացման մեթոդները շատ ժամանակակից և ըմբռնելի են, ամեն մի վայրկյանը օգտագործվում է նոր ինֆորմացիա տալու համար, այս դեպքում կարելի է ասել, որ հաճելին համատեղում ենք օգտակարի հետ: Խմբային աշխատանքները, առաջադրանքները, տնային աշխատանքներն ավելի դյուրին են դարձնում մատուցվող նյութը, նույնը կարող եմ ասել խորհրդատվությունների մասին, իսկ փորձի փոխանակման այցելությունը մեզ թույլ տվեց ամբողջական պատկերացում կազմել մեր հետագա անելիքների մասին: Ես միշտ ասել եմ ու էլի կասեմ, որ ԳՈՒՄ ՀԿ-ի կազմակերպած դասընթացները մեզ ոչ միայն գիտելիքներ են տալիս, այլ նաև հոգեբանորեն շատ դրական ազդեցություն են ունենում մեզ վրա:

Թերեզա Արշակյան, Գնդեվազ Սպառողական կոոպերատիվի, «Առատ Զամբյուղ» վարչության անդամ

ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՇԱՐՔԻՑ....
(շարունակություն)

Իրենց տպավորություններով կիսվում են «Ապագայի Շողեր» ՀԿ-ի շահառուները.....



***

«ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից կազմակերպված դասընթացներին մասնակցելով՝ ես իմ նեղ մասնագիտական իմացությունն ընդլայնեցի: Սովորեցի՝ ինչպես գրել ծրագիր, ինչպես կառավարել բիզնեսը:
Իմացանք լիդերի և առաջնորդի նշանակությունը, որը մեզ շատ կօգնի մեր աշխատանքում»:

Մանան Գևորգյան, Ջերմուկ, «Զանգակատուն» ԲՀԿ-ի շահառու, «Ապագայի Շողեր» ՀԿ-ի խորհուրդի անդամ

***

««Բիզնես Մոդել- կտավ» դասընթացի ավարտին ԳՈՒՄ ՀԿ-ի գործադիր տնօրեն Արտաշես Տոռոզյանը մասնակիցներին հնարավորություն տվեց ընտրել, թե որ ուղղությամբ են ուզում շարունակել իրենց աշխատանքը: Մասնակիցներից ես և Ռուզաննա Ալեքսանյանը ասացինք, որ ցանկանում ենք աշխատել Ջեռքի աշխատանքների խմբի հետ և այս համագործակցության ընթացքում Սարավան բնակավայրում մի նոր մշակույթ ձևավորել: Ես ընտրեցի «Ապագայի շողեր» ՀԿ-ն, քանի որ ինձ ավելի հոգեհարազատ է այս բնագավառը, հետաքրքրություն առաջացրեցին նաև այն աշխատանքները, որոնք կատարում էին խմբի անդամները, և ես շատ մեծ ցանկություն ունեմ, որ այս մշակույթը կարողանամ ձևավորել նաև Սարավանում:
Դասընթացները օգնեցին մեզ լավ ըմբռնել բիզնես մոտեցումները, մանավանդ, որ նախկինում բիզնեսի ոլորտից գիտելիքներ չունեինք: Այս համագործակցությունն օգնեց մեզ նաև պատկերացում կազմել ՀԿ գործունեության վերաբերյալ»:

Սոնա Փանդունց, Սարավան , HDP բարեգործական հիմնադրամի շահառու, «Ապագայի Շողեր» ՀԿ-ի խորհրդի անդամ

***

«Ես արդեն մեկ տարի է, ինչ հաճախում եմ «Զանգակատուն» ԲՀԿ-ի դասերին և բավականին լավ արդյունքի եմ հասել, բայց ԳՈՒՄ ՀԿ-ի դասընթացները մեզ այլ գիտելիքներ են տալիս, արդեն կարողանում ենք ծրագրեր գրել, բիզնես կառավարել: Շատ հետաքրքիր, հաճելի և ուսումնառատ դասընթացներ են անցկացվում, երբեք չենք ձանձրացել և հիմա, երբ արդեն ունենք մեր կազմակերպությունը՝ ԳՈՒՄ-ի տված գիտելիքների շնորհիվ, վստահ եմ, որ շատ մեծ արդյունքների ենք հասնելու»:

Զարինե Միրզոյան, Ջերմուկ, «Զանգակատուն» ԲՀԿ-ի շահառու, «Ապագայի Շողեր» ՀԿ-ի խորհրդի անդամ

LYDIAN ARMENIA

Սոցիալական ձեռնարկատիրության զարգացում ծրագիրն իրականացվում է Լիդիան Արմենիա կազմակերպության ֆինանսական աջակցությամբ

«Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ
Օգոստոս, 2017